

Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ, 1323 թուականին կը սրբադասուի: Իր միաբանութեան կողմէ կոչուած է «հրեշտակային դոկտոր» (լատ.՝ doctor angelicus): Անոր ուսմունքը, 19-րդ դարուն կը յայտարարուի, որպէս՝ Կաթոլիկ Եկեղեցւոյ պաշտօնական փիլիսոփայութիւն:

Թոմաս Աքուինացիի գրութիւններուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն իր գլխաւոր երկու երկերը.- «*Համամատեան աստուածաբանութեան*» (լատ.՝ „Summa theologiae”) եւ «*Համամատեան փիլիսոփայութեան*» (լատ.՝ „Summa philosophiae”):

Թոմաս Աքուինացիի համաձայն, հաւատքը (աստուածաբանութիւնը) եւ բանականութիւնը (փիլիսոփայութիւնը) զիրար չեն կրնար հակասել, որովհետեւ երկուքին ալ ծագումը Աստուծոմէ է. անոնք կը զանազանուին իրենց մէթոտներով միայն, բայց վերջաւորութեան կը յանգին նոյն ճշմարտութեան: Այս իմաստով, ան փորձեց կապ հաստատել՝ բնութեան օրէնքի գաղափարին եւ քրիստոնէական վարդապետութեան միջեւ: Իսկ գործնական իմաստով, Թոմաս Աքուինացի փորձեց կապ հաստատել՝ Արիստոտելի փիլիսոփայութեան եւ Օգոստինոսի աստուածաբանութեան միջեւ:

Նշանաւոր են Թոմաս Աքուինացիի Աստուծոյ գոյութեան հինգ ապացոյցները: Իսկ *չարի* գոյութեան հարցը, Թոմաս Աքուինացի բոլորովին կը մերժէ ու կ'ընդունի Օգոստինոսի վերոյիշեալ մեկնութիւնը: Ասոր պատճառը այն է, որ բարի ու կատարեալ Աստուած, միայն բարի ու կատարեալ աշխարհ մը կը ստեղծէ, ուր *չարը* տեղ չունի:

Թոմաս Աքուինացիի համաձայն, բարոյագիտութեան մեկնակէտը՝ Աստուծոյ գոյութիւնը ընդունիլն է. եւ իսկական երանութիւնը՝ Աստուծոյ հետ միացումը: Իսկ մարդու բարոյական վարմունքը հետեւանքն է Աստուծոյ կողմէ անոր տրուած բանականութեան եւ կամքի ազատութեան (Free Will): Այս գաղափարի գործընթացը հետեւեալն է.- Մարդ, իր բանականութեամբ, կը ճանչնայ *Գերագոյն Բարին* եւ իր կամքի ազատութեամբ կ'իրագործէ զայն: Իսկ երանութեան առաջնորդող *Գերագոյն Բարին* նոյնինքն Աստուածն է, որուն հասնելու համար, մարդ, բարոյական բազմաթիւ պարտաւորութիւններ ունի:

Թոմաս Աքուինացիի համաձայն, առաքիւնութիւնները կը բաժնուին երկու գլխաւոր մասերու.-

- ա) *աստուածաբանական առաքիւնութիւններ* (հաւատք, յոյս եւ սէր), որոնց կարելի է հասնիլ միայն Աստուծոյ շնորհով ու ողորմածութեամբ. եւ
- բ) *բնական առաքիւնութիւններ* (իմաստութիւն, խոհեմութիւն, արդարութիւն, արիութիւն, չափաւորութիւն, եւայլն...), որոնք մարդկային լաւագոյն բնական կարողութիւններն են: